



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ, «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 43-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 8-ՐԴ ԿԵՏԻ, «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, «ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱ-ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

11 ապրիլի 2023թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի

39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հուլիսի 30-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 1-ից: Նշված օրենքի՝ «Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է.

«1. Ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝

(...)

7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վերերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել»:

Ընդունման պահից ի վեր 39-րդ հոդվածը լրացվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-131-Ն, փոփոխվել է 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-169-Ն, խմբագրվել՝ 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-92-Ն, փոփոխվել է 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-116-Ն օրենքներով:

Հիշյալ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ «ոստիկանության ծառայողի համար ինքնին որևէ կրոնական կազմակերպությանն անդամակցելու և անդամակցության համար վարքագծի կոնկրետ դրսևորումներով չպայմանավորված բացարձակ արգելք սահմանելու մասով», **Սահմանադրական դատարանի կողմից 2020 թվականի**

փետրվարի 18-ի ՍԴՈ-1506 որոշմամբ ճանաչվել է Սահմանադրության 41 և 45-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 11-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի մայիսի 7-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունիսի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ «Ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է.

«1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի՝

(...)

8) լինել որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ»:

Ընդունման պահից ի վեր վիճարկվող դրույթը փոփոխությունների և (կամ) լրացումների չի ենթարկվել:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ից:

Հիշյալ օրենքի՝ «Զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Զինծառայողն իրավունք չունի՝

(...)

3) սրբեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն»:

Վիճարկվող դրույթը փոփոխությունների և (կամ) լրացումների չի ենթարկվել:

«Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի դեկտեմբերի 31-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 15-ից:

Հիշյալ օրենքի՝ «Արհեստակցական կազմակերպության մասնակիցները (անդամները)» վերտառությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները»¹:

Ընդունման պահից ի վեր 6-րդ հոդվածը լրացվել և փոփոխվել է: 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-171-Ն օրենքով «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի² «և իրավապահ մարմինների ծառայողները» բառերը փոխարինվել են «, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և սահմանադրական դատարանի անդամները» բառերով, իսկ 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-52-Ն օրենքով «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «սահմանադրական դատարանի անդամները» բառերը փոխարինվել են «Սահմանադրական դատարանի դատավորները» բառերով:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2022 թվականի օգոստոսի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց

¹ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման պահին խնդրո առարկա օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրված է եղել հետևյալ բովանդակությամբ. «Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողները»:

² «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի գործող խմբագրությամբ հիշյալ կարգավորումն ամրագրված է օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում:

հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը
Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմողի դիրքորոշումները

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ Դիմող) գտնում է, որ ինչպես Սահմանադրության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական կարգավորումների մեկնաբանությունից բխում է, որ ոստիկանությունում, զինված ուժերում և այլ ռազմականացված մարմիններում (ներառյալ՝ ազգային անվտանգության մարմիններում) ծառայողների միավորումների ազատության սահմանափակումն ուղղակիորեն չի բխում այդ ազատության բուն էությունից, ուստի՝ այդ ազատությունը սահմանափակող յուրաքանչյուր միջոցի սահմանադրականությունը պետք է քննարկվի իրավաչափ նպատակի առկայության և կիրառված միջոցների համաչափության գնահատման համատեքստում:

Անդրադառնալով սահմանափակման իրավաչափ նպատակի առկայության հարցին՝ Դիմողը ենթադրում է, որ ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններում ծառայողների, ինչպես նաև զինծառայողների՝ արհեստակցական միությանն անդամակցելու արգելքը նախատեսվել է՝ ելնելով պետական անվտանգության և հասարակական կարգի ապահովման իրավաչափ նպատակներից՝ հաշվի առնելով ոստիկանության՝ մարդու անվտանգությունը, հասարակական կարգի պահպանությունն ու հասարակական անվտանգությունն ապահովելու, ազգային անվտանգության մարմինների՝ անձի, հասարակության ու պետության անվտանգությունն ապահովելու գործառույթները, ինչպես նաև զինված ուժերի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու սահմանադրական առաքելությունը:

Դիմողը փաստում է, որ «(...) արհեստակցական միությունները ծառայում են որպես աշխատողների անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության, ինչպես նաև նրանց սոցիալական բարեկեցության ապահովման հիմնական և առավել արդյունավետ մեխանիզմ: Արհեստակցական միությունների ստեղծումն, այսպիսով, բոլոր աշխատողների հիմնարար իրավունքն է, որից վերջիններիս զրկումը կարող է էականորեն խաթարել գործատուի և աշխատողների միջև կայուն և բնականոն երկխոսությունը, ինչն իր հերթին

կառաջացնի գործատուի կողմից աշխատողների իրավունքների խախտման և վերջիններիս նվազ պաշտպանվածության ռիսկեր:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ խնդրո առարկա արգելքը բացառում է Ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, ինչպես նաև զինծառայողների արհեստակցական միությունների ստեղծումը, հետևաբար նաև՝ գործատուի հետ իրավահարաբերություններում աշխատանքային իրավունքների պաշտպանության այդ մեխանիզմից օգտվելու հնարավորությունը: Նման պայմաններում կարծում ենք, որ քննարկվող արգելքը պետք է ունենա հատկապես հիմնավոր և ծանրակշիռ արդարացումներ»:

Դիմողը կարծում է, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի հիմնական նպատակն աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումն է, ուստի՝ նման սահմանափակումը չի կարող համահունչ լինել իրավունքի բուն էությանը և բխել դրա նպատակներից:

Դիմողը նաև արձանագրում է. «(...) արհեստակցական միություններին անդամակցությունն ինքնին որևէ կերպ չի հակադրվում ոստիկանությունում, ազգային անվտանգության մարմիններում ծառայության կամ զինծառայության բնույթին և նպատակներին, ուստի կարծում ենք, որ իրավաչափ նպատակների ապահովումը կարող է իրականացվել նվազ սահմանափակող միջոցների կիրառմամբ, այլ կերպ ասած՝ տվյալ ծառայողների արհեստակցական միությունների գործունեությունը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, որոնք կբացառեն այդ գործունեության արդյունքում պետական անվտանգության կամ հասարակական կարգի վտանգումը՝ առանց ընդհանուր և բացարձակ արգելքների նախատեսման»:

Ըստ Դիմողի՝ ի տարբերություն ոստիկանության ծառայողների և զինծառայողների՝ դատավորների և դատախազների ծառայողական պարտականությունների և գործառույթների իրականացումը նվազ չափով է անմիջականորեն առնչվում հասարակական կարգի և, հատկապես՝ պետական անվտանգության ապահովմանը, ինչի համատեքստում Դիմողի համար հասկանալի չեն այն հիմքերն ու նախապայմանները, որոնց հաշվառմամբ օրենսդիրը որոշել է սահմանափակել դատավորների և դատախազների՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Այս կապակցությամբ Դիմողը կարծում է. «(...) նույնիսկ դատավորին և դատախազին օրենսդրությամբ ներկայացվող՝ քաղաքական զսպվածություն և չեզոքություն, ինքնուրույնություն դրսևորելու պահանջներն այս համատեքստում չեն կարող փոխկապակցվել Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավաչափ նպատակներից որևէ մեկի հետ, քանի որ, ինչպես արդեն նշվել է, արհեստակցական միություններին անդամակցությունը հետապնդում է աշխատողների աշխատանքային իրավունքների և շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակը և չի կարող որևէ կերպ խաթարել իր լիազորությունների իրականացման շրջանակներում դատավորի կամ դատախազի ինքնուրույնությունը կամ խախտել վերջիններիս կողմից քաղաքական զսպվածություն և չեզոքություն դրսևորելու պահանջը:

Ուստի, հիմնվելով վերոգրյալի վրա՝ կարծում ենք, որ դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների և դատախազների կողմից արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու բացարձակ արգելքը չի կարող պայմանավորված լինել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված իրավաչափ նպատակներից որևէ մեկի՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջով, ինչից ելնելով էլ հակասում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածին»:

Դիմողը գտնում է, որ ազատության իրացման բացարձակ արգելքը պետք է համարվի վերջին միջոց, և դրա կիրառման հնարավորությունը դիտարկվի միայն այն դեպքերում, երբ առկա են բավարար, համոզիչ և ծանրակշիռ ապացույցներ, որ նվազ սահմանափակող միջոցները պիտանի կամ բավարար չեն լինի Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Բացի դրանից, Դիմողի գնահատմամբ՝ իրավունքի էությունը խաթարող, դրա իրացումն անհնարին դարձնող նման բացարձակ սահմանափակումը չի կարող համարվել իրավունքի և ազատության նշանակությանը համարժեք, ուստիև՝ չի բավարարում Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի պահանջները:

Կրոնական կազմակերպություններին անդամակցելու արգելքների մասով Դիմողը փաստում է, որ կրոնական կազմակերպությանն անդամակցելու իրավունքը Սահմանադրությամբ երաշխավորվող կրոնի ազատության արտահայտման հիմնարար բաղադրիչն

է, առանց որի էականորեն խաթարված կլինի այդ իրավունքի բուն էությունը: Դիմողի գնահատմամբ՝ «(...) չի կարող հաստատված համարվել, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունն ինքնին անհամարելի է կրոնական կազմակերպությանն անդամակցության հետ, կամ որ ծառայողի կողմից ցանկացած կրոնական կազմակերպությանն անդամակցությունը կարող է ռիսկեր պարունակել պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի ապահովման տեսանկյունից»:

Դիմողի կարծիքով այս եզրահանգումը բխում է նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1506 որոշումից: Ուստի, ըստ Դիմողի՝ «(...) ինչպես ոստիկանությունում ծառայության պարագայում, տվյալ դեպքում ևս ազգային անվտանգության ծառայողների կողմից զսպվածություն, քաղաքական չեզոքություն դրսևորելուն և պետական անվտանգության ապահովման իրավաչափ նպատակին կարելի է հասնել նվազ սահմանափակող միջոցների կիրառման միջոցով, որոնք ամբողջությամբ չեն բացառում կրոնական կազմակերպություններին անդամակցելու իրավունքի իրացման հնարավորությունը, ուղղված են ծառայողների օրինաչափ վարքագծի ապահովմանը և չեն թիրախավորում բացառապես անձի կրոնական ինքնությունը»:

Անդրադառնալով զինծառայողների համար նախատեսված՝ կրոնական միավորում ստեղծելու արգելքին՝ Դիմողը գտնում է, որ այնքան էլ պարզ չէ՝ ինչ է պետք հասկանալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տեղ գտած «կրոնական միավորում ստեղծել» արտահայտության ներքո, քանի որ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի սահմանում կրոնական միավորման կամ կազմակերպության ստեղծման ընթացակարգ, հասկանալի չէ՝ արդյո՞ք խոսքն ինքնին կրոնական համայնք հիմնելու մասին է, թե՞ պարզապես կրոնական կազմակերպությունը՝ որպես իրավաբանական անձ, գրանցելու մասին: Դիմողի գնահատմամբ՝ կանխատեսելի չեն դառնում այն գործողությունները, որոնք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով կհամարվեն «կրոնական միավորման ստեղծում»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրում է. «(...) Որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 45-րդ և 78-րդ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ և 78-րդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով վիճարկվող դրույթներով սահմանվող՝ զինծառայողների, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, դատախազների, դատավորների կողմից արհեստակցական միությանն անդամակցելու, զինծառայողների կողմից նաև կրոնական կազմակերպություն ստեղծելու և ազգային անվտանգության մարմինների ծառայողների կողմից կրոնական կազմակերպությանն անդամակցելու բացարձակ արգելքի սահմանումը ուրանալու և կրոնի ազատության արտահայտումն ու միավորումների ազատությունը, ներառյալ՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքը»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող) գտնում է, որ Սահմանադրությունը, վերաբերելի միջազգային իրավական և ներպետական ակտերը, երաշխավորելով մտքի, խղճի և կրոնի ազատությունը, ինչպես նաև այլոց հետ ազատորեն միավորվելու՝ ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հնարավոր սահմանափակումները հանրային իշխանության մարմիններին սկզբունքորեն պարտավորեցնում են այդ իրավունքի իրացումն ապահովել իրավական այնպիսի նախապայմանների շրջանակներում, համաձայն որոնց՝ հանրային իշխանությունը չպետք է միջամտի այդ ազատությունների իրականացմանը, ինչպես նաև պետք է սահմանի արդյունավետ իրավական և այլ կառուցակարգեր՝ ապահովելու համար այդ ազատություններն ամեն տեսակ ոչ իրավաչափ միջամտություններից:

Միևնույն ժամանակ, Պատասխանողը փաստում է, որ թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավական ակտերը ռազմականացված մարմիններում ամրագրել են քաղաքական և կրոնական չեզոքության ապահովման անհրաժեշտությունը՝ թույլատրելով

օրենսդրին սահմանել սահմանափակումներ՝ սահմանափակման սուբյեկտային կազմի հիմքով:

Ըստ Պատասխանողի՝ կրոնի ազատության արտահայտման և միավորումների ազատության՝ քննարկման առարկա սահմանափակումները «(...) պայմանավորված են կոնկրետ սուբյեկտի կարգավիճակով՝ ըստ նրանց կարգավիճակի կամ հանրային ծառայության մեջ գտնվելու հանգամանքի կամ առանձնահատկությունների: Ուստի ուստիկանությունում կամ ռազմականացված այլ մարմիններում ծառայողների քաղաքական չեզոքությունը կարող է ապահովվել օրենքով ամրագրված տարբեր ինտենսիվությամբ սահմանափակումներ սահմանելու միջոցով»:

Պատասխանողը նաև փաստում է, որ «(...) զինված ուժերում, ազգային անվտանգության, ուստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների՝ տարատեսակ կազմակերպություններին անդամակցելու սահմանափակումը նախատեսված է օրենքով, հետապնդում է օրինական նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում նրանց՝ իրենց կողմից պարտականությունների պատշաճ կատարման համար»:

Անդրադառնալով դատախազների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքի սահմանափակմանը՝ Պատասխանողն արձանագրում է, որ վերոնշյալ սուբյեկտների՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքը նպատակավրեպ է՝ հաշվի առնելով այդ մարմինների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված նյութական, իրավական և սոցիալական երաշխիքները:

Միևնույն ժամանակ, Պատասխանողը գտնում է, որ արհեստակցական միության՝ ներկազմակերպական իրավունքների և պարտականությունների բովանդակությունը կարող է լիովին տարբեր լինել, ուստի՝ արհեստակցական միության ստեղծման սահմանափակման հիմք կարող է ծառայել ոչ թե բուն անդամակցությունն այդ միությանը, այլ այդ անդամակցության հետևանքով այնպիսի իրավունքներ և պարտականություններ ստանձնելը, որոնք անհամատեղելի կլինեն հանրային ծառայողի կողմից հանրային իշխանության չեզոքություն դրսևորելու օրենսդրական պահանջի հետ:

Անդրադառնալով «կրոնական միավորում ստեղծել» հասկացությանը՝ Պատասխա-

նողը փաստում է, որ կրոնական միավորում ստեղծելը ենթադրում է ակտիվ գործողություններ, այն է՝ կրոնական կազմակերպության գրանցում՝ որպես իրավաբանական անձ, կանոնադրության հաստատում և այլն, իսկ զինված ուժերի անձնակազմի անդամը, այդ համակարգին միանալով, կամավոր կերպով ընդունել է համոզմունքների դրսևորման, ինչպես նաև իր գործունեությունից բխող հնարավորությունների մասով սահմանափակումները՝ ելնելով զինվորական կյանքի թելադրած անհրաժեշտությունից:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը գտնում է, որ Դիմողի կողմից վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է վիճարկվող դրույթներով սահմանված երկու տեսակի արգելքների սահմանադրականության խնդրին: Առաջին՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կրոնական կազմակերպության անդամ լինելու օրենսդրական արգելքի, ինչպես նաև զինված ուժերում և այլ զորքերում զինծառայողների կողմից կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի սահմանադրականության խնդրին: Երկրորդ՝ սույն գործով բարձրացվում է նաև զինծառայողների, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, դատախազների, դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու արգելքի սահմանադրականության հարցը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը **սույն գործով կրոնի ազատության իրավունքի հետ առնչվող մասով** քննության առարկա է համարում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը՝ դրանք գնահատելով Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի, 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 49-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների լույսի ներքո: Սույն գործի այս մասով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը

գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) ո՞րն է Սահմանադրության 41-րդ հոդվածում ամրագրված՝ կրոնի ազատության հիմնական իրավունքի իրավական բովանդակությունը և դրա հարաբերակցությունը միավորումների ազատության հիմնական իրավունքի հետ,

բ) որո՞նք են ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերում ու այլ զորքերում ծառայության տեսակները, դրանց իրականացման կառուցակարգերի սահմանադրական հիմքերը,

գ) որո՞նք են ազգային անվտանգության մարմինների և զինված ուժերի ու այլ զորքերի ծառայողների կրոնի ազատության իրավունքի խնդրո առարկա սահմանափակումների հիմքում ընկած իրավական գործոնները՝ կրոնի ազատության իրավունքի սահմանափակմամբ պաշտպանվող սահմանադրական արժեքների համադրությամբ:

Սահմանադրական դատարանը սույն գործով **արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հետ առնչվող մասով** քննության առարկա է դարձնում «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի և դրա հետ փոխկապված «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը՝ դրանք գնահատելով Սահմանադրության 3-րդ հոդվածի, 45-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների լույսի ներքո:

Սույն գործի՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հետ առնչվող մասով, վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. *արդյո՞ք միավորումների ազատության, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհես-*

տրակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի սահմանադրական իրավադրույթների համադրությամբ վիճարկվող օրինադրույթները համապատասխանում են հիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքներին ու սահմանափակման չափանիշներին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել Սահմանադրության 41-րդ հոդվածով ամրագրված՝ կրոնի ազատության իրավունքի բովանդակությունը և դրա առնչությունը միավորումների ազատության հիմնական իրավունքին:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրվում է մարդու մտքի, խղճի, կրոնի ազատության հիմնական իրավունքը: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը մանրամասնում է կրոնի ազատության իրավունքի բովանդակությունը՝ սահմանելով, որ այն «ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը»: Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունն ավարտվում է «կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը» ձևակերպմամբ, ինչից հետևում է, որ 41-րդ հոդվածում ամրագրված իրավունքները, ներառյալ կրոնի ազատությունը, ունեն ներքին և արտաքին բաղադրիչներ, ինչպես նաև, բացի բուն հոդվածում թվարկված արտաքին արտահայտման ձևերից, հնարավոր են այլ, ներառյալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված ձևեր³:

³ Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի միջազգային իրավական հիմքերն ամրագրված են ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (18-րդ հոդված), ՄԱԿ-ի 1966 թվականի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում (18-րդ հոդված), ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածում և 14-րդ հոդվածում, այնքանով, որքանով ուղղակի արգելում է կրոնական համոզմունքների հիմքով խտրական վերաբերմունքը, ՄԻԵԿ-ի թիվ 1 Արձանագրությունում՝ կրթության իրավունքի համատեքստում: Համաձայն դրա 2-րդ հոդվածի՝ «Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը»:

Կրոնի ազատության իրավունքի ներքին բաղադրիչը վերաբերում է հավատքի ազատությանը, մարդու ներաշխարհին և ունի կենսագործման յուրահատուկ կառուցակարգ⁴, իսկ արտաքին բաղադրիչը վերաբերում է կրոնական դավանանքի կամ համոզմունքների հիման վրա որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի վարքագծից ձեռնպահ մնալու իրավունքին, և իր հերթին բաժանվում է կրոնական ազատության դրական (պոզիտիվ) և բացասական (նեգատիվ) տարրերի:

Կրոնական դրական ազատությունը դասական իմաստով սեփական կրոնական հավատալիքները կամ համոզմունքներն ակտիվորեն դավանելու ազատությունն է: Սեփական կրոնը դավանելու իրավունքի կենսագործման հնարավորություններն առավել բազմազան ներկայացված են «Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժականության կամ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1981 թվականի Հռչակագրում, համաձայն որի՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատությունը, ի թիվս այլնի, ընդգրկում է հետևյալ ազատությունները՝ կրոնի կամ համոզմունքների հետ կապված ծեսեր կատարելը կամ հավաքվելը, այդ նպատակներով տեղեր ստեղծելը և պահելը. համապատասխան հրապարակումներ գրելը, թողարկելը և տարածելը. կրոնը կամ համոզմունքները քարոզելն այդ նպատակներին հարմար վայրերում. հանգստի օրերը պահպանելը. տոնական օրերը նշելը և արարողությունների մասնակցելը տվյալ անձի կրոնի կամ համոզմունքների պահանջներին համաձայն. կրոնի և համոզմունքների հարցերի հետ կապված այլ անհատների և համայնքների հետ հաղորդակցվելը՝ ներպետական և միջազգային մակարդակով⁵:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Վիեննայի 1989 թվականի խորհրդակցության Եզրափակիչ ակտը զարգացրեց կրոնի ազատության իրավունքի տարրերի շրջանակը՝ դրանում ներառելով կրոնական հողի վրա խտրականության արգելքը, ոչ հավատացյալների պաշտպանությունը, հավաքական ժամերգու-

⁴ Կրոնական ազատության այս բաղադրիչն առաջ է քաշել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը՝ անվանելով այն «ներքին հարթություն» (forum intrum) (C.V.United Kingdom, European Commission of Human Rights, 15 December 1983, Decisions and Reports, Vol. 37, 1983, pp. 142, 147):

⁵ Տե՛ս Declaration on the Elimination of All Forms of Intolerance and of Discrimination Based on Religion or Belief, 25 November 1981, General Assembly resolution 36/55, հասանելի է՝ <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-all-forms-intolerance-and-discrimination#:~:text=Article%204-1.,political%2C%20social%20and%20cultural%20life.Uhasaneli> 1:

թյունների իրավունքի երաշխավորումը, երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակության թույլտվությունը⁶: Նույն կազմակերպության Կոպենհագենի 1990 թվականի խորհրդակցությունը մասնակից պետություններին առաջարկեց ճանաչել անձի՝ սեփական կրոնը փոխելու իրավունքը⁷:

«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» գործով Եվրոպական դատարանը նշել է, որ «9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատությունը՝ կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակության» հիմքերից է» և գրել է, որ այդ իրավունքը, «կրոնական կտրվածքով» լինելով կենսական տարր հավատացյալների համար, արժեք է նաև «աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների և չեզոք անձանց համար: Բազմակարծությունը, որը դարավոր պայքարի արժեքավոր արդյունք համարվող ժողովրդավարական հասարակության անբաժան մասն է, կախված է դրանից»⁸:

Կրոնական բացասական (նեգատիվ) ազատությունը կրոնական համոզմունքների հիմքով գործադրվող հարկադրանքից կամ դրսևորվող խտրականությունից զերծ լինելն է: Հարկադրանքից զերծ լինելու ազատությունը ենթադրում է, որ մարդն իր կրոնական համոզմունքների պատճառով չի ենթարկվում պատժամիջոցների կամ անբարենպաստ որևէ այլ վերաբերմունքի⁹:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «*ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ*» կրոնի ազատությունն արտահայտելու իրավունքը, որը

⁶ Տե՛ս Concluding Document Of The Vienna Meeting 1986 Of Representatives Of The Participating States Of The Conference on Security and Co-operation in Europe, Held on The Basis Of The Provisions Of The Final Act Relating To The Follow-up to The Conference, Vienna 1989, par. 16.1, 16.2, 16.4, 16.6: Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/a/7/40881.pdf>

⁷ Տե՛ս Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE, 29 June 1990, par. 9.4, հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/9/c/14304.pdf>, ԵԱՀԽ Մարդկային չափանիշի խորհրդաժողովի՝ Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը, Կոպենհագեն, 26 հունիսի 1990 թ., պարբերություն 9.4, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18537> :

⁸ Տե՛ս «*Kokkinakis v. Greece*» European Court of Human Rights, 25 May, 1993, European Human Rights Reports, Vol. 17, 1993, p. 397, para. 31:

⁹ «Կրոնի կամ համոզմունքի հիման վրա անհանդուրժողականության կամ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1981 թվականի Հռչակագրի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «ոչ ոք չպետք է ենթարկվի հարկադրանքի, որը նսեմացնում է իր ընտրությամբ որևէ կրոն կամ համոզմունքներ ունենալու ազատությունը» (տե՛ս ԳԱ-ի վերը նշված Հռչակագրի թիվ 36/55 բանաձևը, 36UW 6AOR, հավելված (թիվ 51), 171): Բացասական կրոնական ազատությունն ամրագրում է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը»՝ սահմանելով «սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու» և այդ ընտրությունը կատարելիս՝ հարկադրանքից ազատ լինելու ազատությունները (18-րդ հոդված, 1-ին և 2-րդ կետեր): Այդ Դաշնագրի 2-րդ հոդվածում առանձին ամրագրված են նաև կրոնական փոքրամասնությունների իրավունքները:

ենթադրում է՝ առաջին, անձինք իրավունք ունեն խմբերով դավանելու իրենց կրոնը՝ առանց հատուկ կազմակերպական իրավական ձևով գրանցվելու, ինչը չի բացառում հավատացյալների խմբերի երկրորդ իրավունքը՝ ձեռք բերել կազմակերպական որոշակի ձևի իրավասությունները: Կրոնի ազատության իրավունքի այս բաղադրիչը կարևորվել է միջազգային պարտադիր և խորհրդատվական մի շարք փաստաթղթերով¹⁰:

Սույն գործով կրոնի ազատության մասով վիճարկվող դրույթներով սահմանված սահմանափակումները դիտարկելով կրոնի ազատության իրավունքի բովանդակության մաս կազմող ներքին ու արտաքին բաղադրիչների, արտաքին դրսևորման բազում ձևերի ու դրանց եղանակների շրջանակում՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սահմանափակումները վերաբերում են դրա միայն մեկ բաղադրիչի ենթատարրին, այն է՝ կրոնական համոզմունքները համատեղ իրականացնելու եղանակներից մեկին՝ պաշտոնապես գրանցված կրոնական կազմակերպությանն անդամակցելուն կամ կրոնական միավորում ստեղծելուն: **Հետևաբար՝ այդ սահմանափակումը բացարձակ չէ ո՛չ բովանդակային (չի արգելում իրավունքի բոլոր կամ նույնիսկ հիմնական հնարավորությունները), ո՛չ սուբյեկտային առումներով**, որովհետև խնդրո առարկա արգելքը համընդհանուր չէ, այլ հասցեագրված է հատուկ կարգավիճակ ունեցող որոշակի սուբյեկտների, որոնց չի արգելվում կրոնական կազմակերպության հետ առնչությունն ընդհանրապես, այլ միայն կրոնական կազմակերպության անդամ լինելը՝ թույլատրելով դրա հետևորդ հավատացյալի կարգավիճակը:

Եվրոպական դատարանի մի շարք որոշումների հիմքում դրված է այն մոտեցումը, որ կրոնի ազատության իրավունքի կարևոր առումներից է միավորման իրավունքը, և միաժամանակ միավորման իրավունքը ենթադրում է կրոնական միավորման իրավունք¹¹: Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն իրողության վրա, որ

¹⁰ Այդ խնդրին համապարփակ անդրադարձ է կատարվել ԵԱՀԿ-ի հետևյալ ձեռնարկներում՝ 1. Guidelines for Review of Legislation Pertaining to Religion or Belief. Prepared by the OSCE/Odihr Advisory Panel of Experts on Freedom of Religion or Belief in Consultation with the European Commission for Democracy Through Law (Venice Commission) Adopted by the Venice Commission at its 59th Plenary Session (Venice, 18-19 June 2004); 2. Welcomed by the OSCE Parliamentary Assembly at its Annual Session (Edinburgh, 5-9 July 2004), հատկապես՝ 14 և 19 էջերը (հասանելի է՝ <https://www.osce.org/files/f/documents/d/b/13993.pdf>); 3. Freedom of Religion or Belief in the OSCE Region: Challenges to Law and Practice (հասանելի է՝ <http://www.osce.org>):

¹¹ Տե՛ս հետևյալ գործերով վճիռները՝ «Sidiropoulos v. Greece», app. no. 57/1997/841/1047, 10/07/1998, «United Communist Party of Turkey and Others v. Turkey», app. no. 19392/92, judgement 30/01/1998, «Gorzeli v. Poland», app. no. 44158/98, 20/12/2001, § 55, «Hasan and Chaush v. Bulgaria», app. no. 30985/96, 26/10/2000, § 62, «Metropolitan Church of Bessarabia v. Moldova», app. no. 45701/99, 13/12/2001, § 118:

Սահմանադրության 45-րդ հոդվածը համարվում է բազմաթիվ հիմնական իրավունքների և ազատությունների, հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, տեղեկատվական և այլ ոլորտներում անհատների ու կազմակերպությունների միավորումների միջոցով գործելու երաշխիքը: Այսպիսով, կրոնի ազատության բովանդակության մաս կազմող՝ այլոց հետ համատեղ այդ իրավունքն իրականացնելու իրավական հնարավորության երաշխիքներից մեկը՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված «այլոց հետ ազատորեն միավորելու», այսինքն՝ միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքն է: Այդ երկու իրավունքների հարաբերակցության մեջ սույն գործի համատեքստում՝ հիմնականը կրոնի ազատության իրավունքն է, որի երաշխիքներից է այլոց հետ ազատորեն միավորվելու իրավունքը: Կրոնի ազատության իրավունքի արտահայտման (արտաքին բաղադրիչի) ձևերի ու եղանակների, դրանց տարրերի հնարավոր շրջանակի համատեքստում սույն գործով վիճարկվող սահմանափակող իրավադրույթները գտնվում են ոչ թե միավորումների ազատության իրավունքի, այլ կրոնի ազատության իրավունքի գործողության տիրույթում՝ որպես դրա իրականացման երկու ձևերից մեկի եղանակ, հետևաբար՝ դրանց սահմանադրականության հարցը պետք է դիտարկվի Սահմանադրության 41-րդ հոդվածի տեսանկյունից:

Որպես կրոնի ազատության իրավունքն այլոց հետ համատեղ իրականացնելու կազմակերպական ձև՝ Սահմանադրությունը ճանաչում է կրոնական կազմակերպությունը (17-րդ հոդված, 41-րդ հոդվածի 4-րդ մաս): «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (17 հունիսի 1991թ.) սահմանում է անհատների կրոնի ազատության իրավունքի բաղադրիչ համարվող և որպես իրավաբանական անձ գրանցվող կազմակերպական-իրավական մեկ ձև՝ «կրոնական կազմակերպություն»՝ հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված ու գրանցված միավորում (հոդված 4-րդ):

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել կրոնի ազատության իրավունքի մասով վիճարկվող դրույթներում առկա «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության իրավական իմաստը:

Կրոնական կազմակերպություն և անհատ փոխհարաբերությունների համատեքստում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի իրավադրույթների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս վեր հանել երեք հասկացություն.

ա) «կրոնական կազմակերպության հավատացյալներ» (7-րդ հոդված, 1-ին մաս, ա) կետ),

բ) «կրոնական կազմակերպության անդամներ», որոնք այդ կարգավիճակը ձեռք են բերել երկու հիմքով: **Առաջին՝** «առնվազն 200 չափահաս հավատացյալ անդամների» խումբը, որ նախաձեռնել է կրոնական կազմակերպության ստեղծումը՝ գրանցումը, և, ըստ էության, դրանից հետո խմբի անդամները վերածվում են կրոնական կազմակերպության **«հիմնադիր անդամների»** (5-րդ հոդված, 1-ին մաս, ե) կետ): **Երկրորդ՝** կրոնական կազմակերպությունն իրավունք ունի իր շուրջը համախմբել իր հավատացյալներին, որի ձևերից է կրոնական կազմակերպության որպես իրավաբանական անձ գրանցվելուց հետո առաջացող անդամությունը՝ **«մասնակից անդամներ»**: Կրոնական կազմակերպությունների կանոնադրություններով նախատեսված է հավատացյալների անդամագրության ինստիտուտը (անդամության հիմքերը, դրա տրամադրման կարգը, դրանից զրկելու հիմքերն ու կարգը և այլն)¹²,

գ) «կրոնական կազմակերպության սպասավոր» (18-րդ հոդված), այսինքն՝ անհատ, որը տվյալ կրոնական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված տարրակարգի հոգևորական է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնական կազմակերպության անդամ հասկացությունը ներառում է վերը նշված «հիմնադիր անդամներին», «մասնակից անդամներին», «կրոնական սպասավորներին», որովհետև անձը կանոնադրական իրավակարգավորումների առանձնահատկությունների կամ տարբեր ժամանակներում նշյալ կարգավիճակներից որևէ մեկը ձեռք բերելու հետևանքով կարող է ունենալ դրանցից միայն մեկը:

¹² Տե՛ս օրինակ՝ «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» կրոնական կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ, հասանելի է՝ <http://www.eca.am/cat/3>

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնի ազատության հիմնական իրավունքի խնդրո առարկա սահմանափակումները համապատասխանում են Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված սահմանափակման որոշակիության սկզբունքին՝ սահմանափակող իրավական դրույթի բովանդակության, սահմանափակումների ծավալի ու «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության մասով, հետևաբար՝ քննարկվող խմբերի ծառայողներն արգելքի բավարար չափով որոշակիության պայմաններում ի վիճակի են դրսևորելու համապատասխան վարքագիծ:

4.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել ազգային անվտանգության ծառայության համակարգում, զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության տեսակները և վեր հանել դրանց կենսագործման կառուցակարգերի սահմանադրական հիմքերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ազգային անվտանգության լիազոր պետական մարմնի համակարգում ծառայության տեսակներն են ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը և սահմանապահ զորքերում ու այլ ստորաբաժանումներում զինվորական ծառայությունը: Հանրային ծառայության դասակարգման սանդղակում ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը պետական ծառայության ինքնուրույն, միաժամանակ իր բնույթով զինվորական համարվող ծառայություն է և կարգավորվում է ոչ միայն ազգային անվտանգության ոլորտային օրենքներով, այլ նաև զինված ուժերի կանոնադրություններով, կանոնագրքերով:

Չինված ուժերում զինվորական ծառայության հարաբերությունները կարգավորվում են «Չինվորական ծառայության ու զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով, որի 1-ին, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ զինվորական ծառայության իրականացման օրենքով սահմանված ձևեր (ծառայության ներգրավման միջոցներ) են՝ **ա)** ժամկետային զինվորական ծառայության զորակոչը, **բ)** զորահավաքային զորակոչը, **գ)** զինվորական վարժական հավաքներին կանչելը, **դ)** պայմանագրային զինվորական ծառայությունը:

Ամփոփելով, Սահմանադրական դատարանն արձանագրում է. ազգային անվտանգության ծառայության համակարգում գործում է պետական ծառայության երկու տեսակ՝ ծառայությունն ազգային անվտանգության մարմիններում, զինվորական ծառայությունը՝ պարտադիր կամ պայմանագրային հիմունքներով: Չինված ուժերում և այլ զորքերում

(ոստիկանության և սահմանապահ) ժամկետային զինվորական, զորահավաքային զինվորական, վարժահավաքային զինվորական ծառայություններն օրենքով սահմանված և պարտադիր ծառայություններ են, իսկ պայմանագրայինը՝ կամավոր զինվորական ծառայություն է:

Ազգային անվտանգության մարմիններում ծառայության կարգավորման կառուցակարգի հիմքում ընկած է Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը, որը ենթադրում է այդ ծառայությունն անցնող սուբյեկտների կամքի ազատությունը և ինքնավարությունը, որոնք, ի սկզբանե չկրելով ծառայության անցնելու իրավական պարտականություն, կամավոր իրացնում են հանրային ծառայության անցնելու իրենց հիմնական իրավունքը և համապատասխան պահանջներին ու պայմաններին բավարարելու դեպքում ձեռք են բերում պետական ծառայողի կարգավիճակ:

Զինված ուժերում, ոստիկանական և սահմանապահ զորքերում զինվորական ծառայության առաջացման և իրականացման կառուցակարգերի հիմքում ընկած են քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունը (Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինը որպես սահմանադրական պարտականության կատարման իրավահարաբերություն առաջանում է օրենքով սահմանված դեպքերում և ձևերով (զորակոչ, զորահավաք, վարժական հավաք), ծառայող սուբյեկտի համար զինվորական ծառայության այդ տեսակն անցնելը պարտադիր է, կատարվում է օրենքով սահմանված ժամկետներում:

Պայմանագրային զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում՝ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու պայմանագրի հիման վրա կամավոր հիմունքներով առաջացող ժամկետային ծառայություն է: Պայմանագրային զինվորական ծառայության հիմքում ընկած են պայմանագրի կնքելու ազատության և դրա կողմերի կամքի ինքնավարության սկզբունքները: Պայմանագրային զինվորական ծառայության անցնելու պայմանագրի կողմ հանդիսացող զինծառայողը, իր կամքի համաձայն, կամավոր ստանձնում է պարտականություն՝ անցնել զինվորական ծառայության՝ օրենքի պահանջների հիման վրա և պայմանագրով սահմանված պայմաններով: Օրենքը նրան

հնարավորություն է տալիս մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելու, ինչը պայմանագրային զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու հիմք է, եթե չունի պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ:

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ վերոբերյալ իրավիճակների համար նախատեսված սահմանափակումները դիտարկվում են «որպես անձի կողմից սեփական կրոնը դավանելու իրավունքից կամովին հրաժարում»: «Կալաչն ընդդեմ Թուրքիայի» գործով այդ դատարանը նշել է, որ զինված ուժերի պաշտոնյային ծառայությունից ազատելը մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատությունը պաշտպանող 9-րդ հոդվածի խախտում չէ¹³: Նա հետապնդվել է «հակաօրինական արմատական հայացքներ» ունենալու համար: Կառավարությունը պնդել է, որ դիմողը դրսևորել է անհավատարմություն պետության աշխարհիկ սկզբունքների նկատմամբ: Դատարանի դիրքորոշմամբ՝ **դիմողը կամովին ընդունել է իր համոզմունքները դավանելու սահմանափակումները զինվորական կարգապահության համակարգում ընդգրկվելու միջոցով**, հետևաբար՝ ծառայությունից հեռացումը ճանաչվել է որպես նրա վարքի և վերաբերմունքի, ոչ թե իր կրոնը դավանելու եղանակի հետևանք: Դատարանի տեսանկյունից դիմողն «**իր իրավունքների սահմանափակումներն ինքն է ընտրել**»¹⁴ և իր կրոնի ազատությունն իրացնելիս անձն ստիպված է հաշվի առնել այն հատուկ իրավիճակը, որում գտնվում է¹⁵:

Այսպիսով, ըստ ծառայության անցնելու սահմանադրական հիմքերի՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, զինվորական պայմանագրային ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման հետևանքով կամավոր հիմունքներով ստանձնած ծառայություններ են: Զինվորական պարտադիր ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության կատարման հետևանքով առաջացող և օրենքով սահմանված ձևերով ու ժամկետներում իրականացվող ծառայություն է:

4.3. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել կրոնի

¹³ Տե՛ս «*Kalaç v. Turkey*», European Court of Human Rights, 2 July, 1997, European Human Rights Reports, Vol. 27, 1999, p. 552:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, պարբերություն 28:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, պարբերություն 27:

ազատությունը սահմանափակող վիճարկվող դրույթները՝ համապատասխան ծառայությունների սահմանադրական հիմքերի համատեքստում:

Սույն գործի շրջանակներում կրոնի ազատության իրավունքին առնչվող վիճարկվող դրույթներից մեկի՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ծառայողներն իրավունք չունեն լինելու կրոնական կազմակերպության անդամ: Սահմանադրական դատարանի գնահատմամբ արգելքը վերաբերում է կրոնական կազմակերպության անդամության ցանկացած ձևի (հիմնադիր անդամ, մասնակից անդամ, կրոնական կազմակերպության սպասավոր):

Սահմանադրական դատարանը հատուկ շեշտում է «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության՝ սույն որոշման 4.1. ենթակետում բացահայտված իմաստի կարևոր իրավական նշանակությունը, քանի որ այն, **առաջին՝** հնարավորություն է տալիս սահմանազատելու «կրոնական կազմակերպության անդամներին» «կրոնական կազմակերպության հավատացյալներից», այսինքն՝ անձանցից, որոնք մասնակցում են տվյալ կրոնական կազմակերպության համատեղ կատարվող կրոնական ծեսերին և այլ միջոցառումներին, և որոնց հոգևոր-կրոնական կարիքներն ու պահանջմունքները բավարարվում են այդ կրոնական կազմակերպության գործունեության արդյունքում, **երկրորդ՝** հիմք է տալիս եզրակացնելու, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի վիճարկվող դրույթով սահմանված արգելքը՝ «լինել կրոնական կազմակերպության անդամ» նշանակում է, որ համապատասխան ծառայողը ծառայության անցնելու պահից չի կարող լինել, իսկ նշանակվելու պահից սկսած չի կարող դառնալ որևէ կրոնական կազմակերպության անդամ՝ վերը նշված իմաստով, **երրորդ՝** նշված ծառայողները, եթե ունեն «կրոնական կազմակերպության հավատացյալի» կարգավիճակ, ապա պահպանում են այն, հետևաբար՝ չեն զրկվում այլոց հետ կրոնական համոզմունքները համատեղ իրականացնելու իրենց սահմանադրական իրավունքից, նման կարգավիճակով ծառայողներն իրավունք չունեն իրենց պաշտոնական դիրքն օգտագործել կրոնական միավորումների շահերի համար, քարոզել վերաբերմունք կրոնական միավորումների նկատմամբ, իսկ ծառայողական պարտականությունները կատարելիս՝ կրոնական գործունեություն իրականացնել: **Այսպիսով՝ ազգային**

անվտանգության մարմիններում ծառայողներին ներկայացվող սահմանափակումները նախապես հայտնի, օրենքով սահմանված իրավադրույթներ են:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը զինվորական ծառայության մեջ գտնվող անձին արգելում է *«ստեղծելու (...) կրոնական միավորումներ (...), իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն»*: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս իրավադրույթը, նախ, զինծառայողին արգելում է կրոնական միավորումների ստեղծումը, իսկ նրա կրոնական միավորման անդամ լինելու դեպքում (վերաբերում է անցյալին) արգելում է կրոնական քարոզչությունը: Զինվորական ծառայության անցնելու կամավոր և պարտադիր տեսակները հիմք են տալիս ծառայողին ներկայացվող սահմանափակումների շրջանակը և բովանդակությունն օրենքով սահմանելիս ցուցաբերելու տարբերակված մոտեցում: Դրա օրինակն է նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որը զինծառայողին արգելում է «պաշտոնեական դիրքն օգտագործելու ի շահ (...) կրոնական (...) կազմակերպությունների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության»: Այս արգելքը վերաբերում է միայն զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց:

Պայմանագրային զինվորական ծառայողը, ըստ վիճարկվող նորմի, որպես կամավոր ծառայության անցած անձ չի կարող ստեղծել և դրանով իսկ դառնալ կրոնական միավորման անդամ, իրավունք չունի զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնել քարոզչական գործունեություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտադիր զինվորական ծառայության ներգրավված զինվորական ծառայողների իրավական կարգավիճակը՝ ներառյալ նրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների մասով, էական առանձնահատկություն ունի: Այդ հիմքով զինվորական ծառայություն կրող անձի անհատական իրավական կարգավիճակը ներառում է մինչև ծառայությունը ձեռք բերված իրավունքներն ու ստանձնած պարտականությունները: Պարտադիր զինվորական ծառայության անցնելը չի վերացնում կամ սահմանափակում նրա անհատական իրավական կարգավիճակի բոլոր տարրերը: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը զինվորական ծառայողներին արգելում է ստեղծել

կրոնական միավորում: «Արգելում է ստեղծել» արտահայտությունն ունի ներկա իմաստ և նշանակում է ծառայության ընթացքում: Չինվորական ծառայության սուբյեկտները կարող են լինել կրոնական միավորման (կազմակերպության) անդամ՝ մինչև ծառայության անցնելը: Այս իրավիճակի համար վիճարկվող դրույթը սահմանում է, որ նրանք իրավունք չունեն «զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն»:

Կրոնական միավորումներ ստեղծելու արգելքը և կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում ծառայակիցների շրջանում քարոզչական գործունեություն իրականացնելու արգելքը կիրառվում են ծառայության սուբյեկտների նկատմամբ, սահմանափակում են նրանց մինչծառայական իրավասուբյեկտությունը, սակայն իրենց բովանդակությամբ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների տեսանկյունից համապատասխանում են Սահմանադրությանը, որովհետև սահմանված են օրենքով, բխում են զինված ուժերի և այլ զորքերի, հետևաբար՝ զինծառայողների հատուկ առաքելությունից, դրանց չեզոքության սկզբունքից, համապատասխանում են զինվորական ծառայության հիմքում դրված սկզբունքներին, չեն խախտում կրոնի ազատության հիմնական իրավունքի էությունը՝ դրա արտահայտման արտաքին բազում ձևերից արգելելով միայն երկու տարր՝ կրոնական միավորման ստեղծումը և այդ միավորման անդամ լինելու դեպքում ծառայության ընթացքում ու ծառայակիցների շրջանում՝ կրոնական քարոզչությունը:

4.4. Ազգային անվտանգության մարմինների և զինվորական ծառայողների կրոնի ազատության իրավունքի խնդրո առարկա սահմանափակումների սահմանադրականության գնահատման համար կարևոր նշանակություն ունեն սահմանափակումների հիմքում ընկած իրավական գործոնները:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանափակման հիմքում դրված արժեքներ է համարում պետական անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունը և բարոյականությունը, այլոց հիմնական իրավունքները և ազատությունները: Ելնելով դրանց կարևորությունից՝ սահմանադիրն օրենսդիրն հնարավորություն է տվել միայն օրենքով նախատեսել կրոնի ազատության արտահայտման սահմանափակումները, որոնցով հետապնդվող նպատակն այդ արժեքների պաշտպանությունն է: Խնդրո առարկա սահմանափակումներն ամրագրված են պետական ծառայության առանձին

ուղորտները կարգավորող օրենքներով:

ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածը ճանաչում է պետության իրավունքը՝ սահմանափակել նույն հոդվածով նախատեսված կրոնական համոզմունքը դավանելու իրավունքը, եթե սահմանափակումները նախատեսված են օրենքով և «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության ու բարոյականության կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների»: Բացի դրանից, Եվրոպական դատարանի պրակտիկայով որդեգրած մոտեցումների համաձայն՝ զինված ուժերում իրավաչափորեն կարող են սահմանափակվել կրոնի ազատության իրավունքը զինվորական կարգապահությունն արտացոլող այնպիսի միջոցառումներով, որոնց նպատակն է հասարակական կարգի կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Սակայն յուրաքանչյուր այդպիսի սահմանափակում պետք է լինի նախատեսված օրենքով և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ մինչ այժմ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ խնդրո առարկա օրենսդրական կարգավորումները համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին: Դիմողի կողմից քննարկվող օրենքներին վերագրվող բացերը թվացյալ են, իսկ դրանց որոշ իրավադրույթների՝ ընդհանրացվածությամբ պայմանավորված անորոշության տարրերը հաղթահարելի են դատական մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերի և այլ զորքերի որոշակի առանձնահատկությունների վրա, որոնք ելակետային են դրանցում ինչպես խնդրո առարկա, այնպես էլ մի շարք այլ սահմանափակումների նախատեսման համար:

Ազգային անվտանգության մարմինները կազմում են միասնական համակարգ և օրենքով նախատեսված գործունեության յուրահատուկ ուղղություններով իրականացնում են հատուկ բնույթի խնդիրներ, օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում ունեն հարկադրանք կիրառելու իրավունք, ներառյալ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն, մարտական տեխնիկայի գործադրման իրավազորություն: Այս ընդհանուր առանձնահատկությամբ պայմանավորված՝ ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմակերպվում ու գործում է իր առջև դրված խնդիրների արդյունավետ

իրականացումն ապահովող յուրահատուկ սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝ հասարակական միավորումների գործունեությունից անկախության, միանձնյա և կենտրոնացված ղեկավարման, օրենսդրությամբ չարգելված բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցված կիրառման, համաչափության և այլն:

Ազգային անվտանգության մարմիններում ծառայության սկզբունքները և դրանց վրա կառուցված անձնակազմի համալրման, ներառյալ համապատասխան ծառայությունների կազմակերպման կարգը, ծառայության նշանակման պայմանները, դրանց ներկայացվող պահանջները, ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները (ներառյալ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքը), ծառայության կարգը, երբեմն նաև հետծառայողական շրջանում՝ նախկին ծառայողին ներկայացվող պահանջներն ու սահմանափակումները բխում են այդ կառույցի առջև դրված յուրահատուկ խնդիրներից և, դրանով պայմանավորված՝ երաշխիք են այդ մարմնի և դրա ծառայողների հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ գործընթացներում չեզոքության, անաչառության, անկողմնակալության, ծառայությանը նվիրվածության, զսպվածության, ծառայության ոլորտում շահերի, ներառյալ կրոնական հողի վրա, բախման իրավիճակի առաջացման կանխման ապահովման համար:

Ձինված ուժերի սահմանադրական առաքելության, դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և չեզոքության սկզբունքների, զինվորական ծառայության իրավական ինստիտուտի հայեցակարգային հիմքերի ու առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներն արտահայտել է 2021 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴԴ-1616 որոշմամբ՝ արձանագրելով, որ՝ «*Ձինվորական ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որն ունի վառ արտահայտված բացառիկ առանձնահատկություններ՝ ծառայության նշանակվելու, ծառայության անցնելու և դադարելու կարգերով, և դրանցով իսկ արմատականորեն տարբերվում է «պետական ծառայություն» ընդհանուր հասկացությունից:*

(...)

(...) *Ձինվորական ծառայությունը՝ որպես գործունեության հատուկ տեսակ, աչքի է ընկնում իր առանձնահատուկ հատկանիշով, մասնավորապես՝ այն իրականացվում է պետության կողմից հիմնադրված ռազմական կազմակերպությունում (զինված ուժերում և այլ զորքերում), որը կոչված է մասնակցելու ռազմական գործողություններին՝ ռազմական*

մեթոդների և զինված պայքարի միջոցների կիրառմամբ»:

Ձինված ուժերի և այլ զորքերի՝ որպես պետության զինված կազմակերպության յուրահատկություններով պայմանավորված՝ զինվորական ծառայությանը բնորոշ են էական առանձնահատկություններ, որոնք բացահայտված են Սահմանադրական դատարանի վերոնշյալ ՍԴՈ-1616 որոշմամբ. «*Ինչպես և ռազմական կառավարման դեպքում՝ կառավարման ընդհանուր սկզբունքներից, այնպես էլ զինվորական ծառայության ոլորտում հանրային ծառայության ընդհանուր իրավական սկզբունքներից բխող կանոններից արվում են իրավաբանական և փաստական բացառություններ՝ պայմանավորված զինվորական ծառայության յուրահատկություններով: Ձինվորական ծառայության հատուկ սկզբունքները բնութագրում են զինվորական ծառայությունը՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակ, և ենթակա են կիրառման դրա բոլոր ոլորտների նկատմամբ: Այդ սկզբունքներն են՝ զինվորական ծառայության կարգավորման հրամայական (իմպերատիվ) բնույթը, զինվորական ծառայության և զինծառայողների կենտրոնացված կառավարումը, լրիվ ու հետևողական միանձնյա կառավարումը, խստագույն զինվորական կարգապահությունը, զինծառայողների միջև փոխհարաբերությունների ենթակայությունը (սուբորդինացիա), անընդհատությունը, առավել օպերատիվությունն ու շարժունությունը, զինծառայողների խստացված իրավական պատասխանատվությունը»:*

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև սույն գործով կարևոր նշանակություն ունեցող հետևություն. զինվորական ծառայության ոլորտում գործում է զինվորական ծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության սկզբունքը՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջնային խնդրով:

Ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերի և այլ զորքերի որոշակի առանձնահատկությունների համատեքստում Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ սույն գործով վեճի հիմքում ընկած դիմող և պատասխանող կողմերի հակադիր մոտեցումների հիմքում ընկած են օբյեկտիվ հիմքերով պայմանավորված շահերի տարբերությունները՝ մի կողմից, հատուկ բնույթ ունեցող պետական կառույցների գործունեության արդյունավետությունը, մյուս կողմից, անհատի կրոնի ազատության իրավունքը՝ մասնավորապես՝ դրա մեկ տարրը՝ անդամությունը կրոնական կազմակերպությանը կամ այդպիսի միավորման ստեղծումը: Այդ արգելքների

պատճառն ընդհանրապես կազմակերպության, իսկ տվյալ դեպքում կրոնական կազմակերպության բնույթն է՝ կազմակերպական միասնությունը, դրանով պայմանավորված անդամների որոշակի իրավունքների ու պարտականությունների համակցությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնական կազմակերպության հետևորդ հավատացյալի կարգավիճակն էականորեն տարբերվում է ցանկացած ձևով անդամի (հիմնադիր, մասնակից, հոգևոր սպասավոր) կարգավիճակից: Կրոնական կազմակերպությունների հավատացյալների այդ երկու տարրակարգերի միջև, բացի իրավական տարբերություններից, գոյություն ունեն նաև հավատքի հիմքով անհատական դիրքորոշումների տարբերություններ. ենթադրվում է, որ կրոնական կազմակերպության անդամը կամ այդպիսին հիմնադրելու ցանկություն ունեցող հավատացյալն ավելի ակտիվ ու նախանձախնդիր է, քան դրա սովորական հավատացյալը կամ հետևորդը: Այն իրավիճակում, երբ նույն անձն ունի և՛ կրոնական կազմակերպության անդամի, և՛ հատուկ բնույթ ունեցող պետական կառույցի ծառայողի հասարակական-իրավական կարգավիճակ, բախումն այդ երկու կարգավիճակներից բխող գործառույթների միջև առավել հնարավոր է, քան սովորական հետևորդ հավատացյալի դեպքում, չնայած վերջինի համար ևս օրենքը սահմանել է սահմանափակումներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրոնական կազմակերպության անդամ լինելու, ինչպես նաև զինծառայողի կողմից այդպիսին ստեղծելու արգելքները բխում են այդ ծառայությունների առջև դրված խնդիրների յուրահատկություններից և հետապնդում են այդ կառույցների, դրանց ծառայողների ներծառայական հարաբերություններում, ինչպես նաև հասարակական-կրոնական գործընթացներում առավել չեզոքության, անաչառության, անկողմնակալության, զսպվածության, ծառայությանը նվիրվածության ապահովման, կրոնական հողի վրա շահերի բախման կանխման նպատակներ: Քննարկվող սահմանափակումները միջոց են **կանխելու** կրոնական կազմակերպությունների իրավահավասարության խախտման, կրոնական հողի վրա խտրականության ու պաշտոնեական լիազորությունների չարաշահումների, ծառայողական պարտքի կատարմանը խոչընդոտելու և վնասելու, պետական ծառայողի չեզոքության ու անաչառության խախտման, ծառայողական ստորադասության հարաբերություններում սեփական համոզմունքները ենթակա-ներին պարտադրելու, ինչպես նաև այլ բացասական սոցիալ-իրավական հետևանքների

հնարավորությունը: Ընդ որում՝ թվարկված բացասական հետևանքներն առնչվում են Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված, պաշտպանության ենթակա գրեթե բոլոր արժեքների հետ:

Սահմանադրական դատարանը, ամփոփելով Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի, 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 45-րդ, 49-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների լույսի ներքո կրոնի ազատության իրավունքը սահմանափակող վիճարկվող օրենսդրական դրույթները գնահատելու վերլուծությունները, գտնում է, որ՝

1) վիճարկվող դրույթներով սահմանված արգելքները կրոնի ազատության ներքին և արտաքին բաղադրիչների, դրսևորման բազմազան ձևերի, եղանակների լայն շրջանակում վերաբերում են արտաքին արտահայտման մեկ ձևի առանձին եղանակի մեկ տարրին՝ «լինել կրոնական կազմակերպության անդամ» կամ «ստեղծել կրոնական միավորում», ուստի՝ այդ հիմնական իրավունքի բովանդակությանը, և ծառայության սուբյեկտների կրոնական կազմակերպության հետ առնչության արգելքի առումներով բացարձակ չեն, սահմանափակող իրավադրույթները բավարար չափով որոշակի են, սահմանափակման ծավալով՝ նվազագույն և չեն խախտում հիմնական իրավունքի դրույթների էությունը, հետևաբար՝ բավարարում են Սահմանադրության 80-րդ հոդվածի հիմնական իրավունքների և ազատությունների դրույթների էության անխախտելիության պահանջներին, ինչպես նաև Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված սահմանափակման որոշակիության սկզբունքին,

2) ազգային անվտանգության մարմիններում, ինչպես նաև զինված ուժերում ու այլ զորքերում պայմանագրային ծառայությունները հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի հիմքով առաջացող կամավոր հիմունքներով ստանձնած պարտականություններ են, և կրոնի ազատության մասով ծառայողին ներկայացվող սահմանափակումները նախապես հայտնի, օրենքով սահմանված իրավադրույթներ են, հետևաբար՝ համապատասխանում են Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասին, 49-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներին,

3) զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված հիմքերով պարտադիր ծառայության սուբյեկտների՝ կրոնի ազատության իրավունքի սահմանափակումները բխում են հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու պարտականությունից, կրում են

ժամանակավոր բնույթ, սահմանված են օրենքով, բավարարում են իրավունքների սահմանափակման որոշակիության սկզբունքի պահանջները, իրենց ծավալային բովանդակությամբ չեն խախտում կրոնի ազատության հիմնական իրավունքի էությունը՝ դրա արտահայտման արտաքին բազում ձևերի համատեքստում, հետևաբար՝ համապատասխանում են Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասին, 41-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ և 80-րդ հոդվածներին,

4) վիճարկվող դրույթներով նախատեսված սահմանափակումներն ամրագրված են «միայն օրենքով» և կրոնի ազատության հիմնական իրավունքի սահմանափակման սահմանադրական հիմքերի (արժեքների), դրանց համակցության պաշտպանության անհրաժեշտության առումով հետապնդում են իրավաչափ նպատակներ, հաշվի են առնում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, չեն գերազանցում հիմնական իրավունքների ու ազատությունների Հայաստանի Հանրապետության՝ միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունները, հետևաբար՝ նշյալ դրույթները համապատասխանում են Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև 81-րդ հոդվածին:

4.5. Սահմանադրական դատարանը, վերլուծելով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սույն գործով վիճարկվող օրինադրույթները, ուշադրություն է հրավիրում այն իրողության վրա, որ միությունների ազատության իրավունքը կարգավորող Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը, ամրագրելով ճանաչելով այդ հիմնական իրավունքը, սահմանում է դրա սահմանադրական բովանդակությունը, ինչի տրամաբանական շարունակությունն է 2-րդ մասում արձանագրված պահանջը, որ միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, իսկ 4-րդ մասում ամրագրված է միավորումների ազատությանը միջամտության երկու եղանակ՝ միավորումների գործունեության կասեցում կամ արգելում, որը կարող է կիրառվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Սահմանադրության 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»: Հիմնական իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման համար չափորոշիչ է Սահմանադրության 75-րդ հոդվածը, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Օրենսդրական կարգավորումը կոչված է նորմատիվ նախադրյալներ ստեղծելու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրմամբ հետապնդվող նպատակների կենսագործման համար՝ ներառելով կարգավորման առարկայի մեջ մտնող բոլոր էական հարաբերությունները:

Սահմանադրության 75-րդ հոդվածն օրգանապես փոխկապված է դրա 3 և 80-րդ հոդվածներին: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող սահմանադրական դրույթներն իրենց կարգավորիչ նպատակներին հասնում են օրենսդրության ու դրա կիրառման միջոցով, սակայն իրավական կարգավորման տվյալ գործընթացում անհրաժեշտ է կանխել հիմնական իրավունքներին սպառնացող վտանգները, ի դեմս՝ սահմանադրական դրույթների բացառումների, դրանցից շեղումների, դրանց հետ օրենսդրական հակասությունների ու դրանց խախտումների: Այդ վտանգները կանխելու կարևոր երաշխիքներից են Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, դրանով պայմանավորված՝ Սահմանադրության դրույթների հիմնարար իրավական նշանակությունը, ինչպես նաև Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «*Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք*» սահմանադրական կարգի հիմունքը:

Հիմնական իրավունքներին ու ազատություններին սպառնացող վտանգները կանխելու կարևոր երաշխիք է Սահմանադրության 80-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է»: Այս իրավադրույթը հանրային իշխանությանը և դրա մարմիններին ուղղված արգելող պարտականություն է. հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական դրույթներն իրավական կարգավորման կառուցակարգում (օրենքներ, ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, անհատական իրավական ակտեր) մանրամասնելիս չխախտել,

չխեղաթյուրել, բովանդակային առումով չվերացնել դրանց դրույթների էությունը, ամբողջովին կամ բացարձակ չարգելել դրա իրականացումը:

Սահմանադրության 46-րդ հոդվածը 45-րդ հոդվածի ընդհանուր համատեքստում սահմանում է հատուկ իրավակարգավորում՝ նախատեսված առանձնահատկություն ունեցող քաղաքական միավորման՝ կուսակցության համար՝ մանրամասնելով այդ միավորման անդամության և գործունեության որոշ կողմեր: Հատուկ իրավակարգավորում առկա է նաև 45-րդ հոդվածի 1-ին մասում, ի դեմս՝ միության հատուկ տեսակ համարվող արհեստակցական միությունների վերաբերյալ իրավադրույթի, որի հիմքում ընկած է արհեստակցական միությունների առանձնահատկությունը, այն է՝ դրանց ստեղծումը և դրանց անդամագրվելը հետապնդում է աշխատողների աշխատանքային շահերի պաշտպանության նպատակ: Այսպիսով **Սահմանադրությունը բոլոր տեսակի միությունների զանգվածում առանձնացնում է արհեստակցական միություններին և դրանց վերագրում է հատուկ՝ իրավապաշտպան առաքելություն՝ աշխատանքային իրավունքների ոլորտում:**

Սահմանադրական կարգավորման այս տեսլականին համապատասխան՝ արհեստակցական միությունները ստեղծվում են աշխատանքային հարաբերությունների ոլորտում և կոչված են իրականացնելու աշխատողների շահերի պաշտպանությունը: Սահմանադրական այս հիմնադրույթների համաձայն՝ «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ արհեստակցական միությունն արհեստակցական կազմակերպություն կամ արհեստակցական կազմակերպության միություն է, իսկ արհեստակցական կազմակերպությունը հասարակական միավորում է, որն օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորմամբ միավորում է տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով: Սահմանադրական առաքելությունից բխող այս կարգավիճակին համապատասխան՝ արհեստակցական միությունները գործատու և (կամ) երրորդ անձի ու աշխատողների աշխատանքային հարաբերությունների ոլորտում իրականացնում են **աշխատողների իրավունքների պաշտպանության, շահերի ներկայացուցչության, սոցիալական գործընկերության ապահովման, խորհրդատվական և այլ գործառույթներ,**

օժտված են դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավունքներով:

Այսպիսով՝ Սահմանադրությունը սահմանում է միավորումների ազատության հիմնական իրավունքի դրսևորման հատուկ իրավակարգավորում՝ դրանով ճանաչելով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքը: Այդ իրավունքը, թղթակցելով անհատների աշխատանքային իրավունքներին և հատկապես դրանց պաշտպանության իրավունքին, չի կորցնում իր՝ որպես հիմնական իրավունքի ինքնուրույն նշանակությունը, որովհետև համարվում է աշխատողների աշխատանքային շահերի և աշխատանքային իրավունքների պաշտպանության անհատական (մինչդատական և դատական) ձևին զուգահեռ գործող, վերջինին չկրկնող՝ **կոլեկտիվ և անհատական աշխատանքային իրավունքների կոլեկտիվ պաշտպանության ինքնուրույն ձև:**

Վերոգրյալ մոտեցումների համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունն արհեստակցական միություններին վերագրում է հատուկ՝ իրավապաշտպան առաքելություն, հետևաբար՝ այդ իրավունքի իրականացումն աշխատանքային իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է: Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտում կարևոր է նաև յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարվող գործունեության արդյունավետության ապահովման նկատառումներով: Այլ կերպ ասած՝ որքան երաշխավորված ու պաշտպանված են աշխատանքային իրավունքներն ու օրինական շահերը, այնքան բարձր է կատարվող աշխատանքի արդյունավետությունը: Այս համատեքստում Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՄԻԵԿ-ը տարբերություն չի դնում Պայմանավորվող պետության՝ որպես պետական իշխանության կրողի գործառույթների և որպես գործատուի պարտականությունների միջև, հետևաբար՝ ըստ Եվրոպական դատարանի՝ դրա 11-րդ հոդվածը պարտադիր է «Պետության՝ որպես գործատուի» համար, անկախ նրանից, թե վերջինիս հարաբերություններն իր աշխատողների հետ կարգավորվում են հանրային թե մասնավոր իրավունքով¹⁶:

¹⁶ St'u «Schmidt and Dahlström v. Sweden», 06.02.1976, app. no. 5589/72, § 33; «Tüm Haber Sen and Çınar v. Turkey», FINAL 21.05.2006, app. no. 28602/95, § 29:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համակարգային այս տրամաբանության մեջ «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված իրավադրույթը, որ «Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները», զրկում է նշյալ խմբերի ծառայողներին իրենց շահերի և իրավունքների պաշտպանության կարևոր ձևից՝ չնախատեսելով կոլեկտիվ իրավունքների պաշտպանության որևէ այլ փոխլրացնող ընթացակարգ կամ ինստիտուտ: Սահմանադրական դատարանի տեսանկյունից այս գնահատականը տարածվում է նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերում սահմանված համանման արգելքների վրա:

Սահմանադրական դատարանը, արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սույն գործով վիճարկվող օրինադրույթները դիտարկելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրավական կարգավորման սահմանադրական կառուցակարգում, գտնում է, որ այլոց հետ ազատորեն միավորվելու միջոցով աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը Սահմանադրությամբ ճանաչված և անմիջականորեն գործող իրավունք է: Օրենքներով այդ հիմնական իրավունքի կազմակերպական կառուցակարգերում և ընթացակարգերում ներդրված խնդրո առարկա արգելքները բացարձակ են, հետևաբար՝ չեն կարող ստեղծել հիմնական այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, այլ ընդհակառակը՝ խախտում ու խաթարում են այդ հիմնական իրավունքի բովանդակությունն ամրագրող սահմանադրական դրույթների էությունը, վերացնում դրանք: Սահմանադրական դատարանի այս եզրակացությունը համապատասխանում է Եվրոպական դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի՝ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածում նշված երեք խմբերի՝ զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումները

պետք է խստորեն մեկնաբանվեն և, հետևաբար՝ պետք է սահմանափակվեն խնդրո առարկա իրավունքների «իրականացմամբ»: Այս սահմանափակումները չպետք է խաթարեն միավորվելու իրավունքի բուն էությունը:¹⁷

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոբերյալ հիմնավորումների համատեքստում «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված օրինադրույթն իր բնույթով չի կարող համարվել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքը կամ ազատությունը Սահմանադրության իմաստով սահմանափակող իրավադրույթ, որովհետև սահմանափակումը ենթադրում է օրենքով, սահմանադրական նպատակներին համահունչ՝ Սահմանադրությամբ ամրագրված կոնկրետ հիմնական իրավունքի կամ ազատության բովանդակության նեղացում, նվազեցում, բովանդակային որևէ բաղադրամասի բացառում, այլ ոչ թե հիմնական իրավունքի իսպառ արգելում¹⁸: **Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ պետության կողմից օրենքով իրականացված միջամտությունը բացարձակ արգելքի ձևով իրավաբանական ուժ կարող է ունենալ միայն Սահմանադրությամբ ուղղակիորեն այդ արգելքի ամրագրման դեպքում:** Դրա օրինակն է Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված դրույթը, համաձայն որի՝ դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ:

4.6. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մաս): Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Ելնելով սույն որոշման նախորդ ենթակետում առաջ քաշված իրավական այն դիրքորոշումից, որ սույն գործի շրջանակներում միավորումների ազատության, այդ թվում՝

¹⁷ Տե՛ս «Demir and Baykara v. Turkey», 12.11.2008, app.no. 34503/97, § 97:

¹⁸ Սահմանափակման խնդրի հարցում մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերն օգտագործում են «սահմանափակում», «նահանջ կամ շեղում իրենց պարտավորություններից», երբեմն «միջամտություն» եզրույթները՝ դիտարկելով դրանք համարժեք հասկացություններ:

արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի մասով բարձրացված սահմանադրաիրավական խնդիրը վերաբերում է ոչ թե դրա իրականացման կամ դրա սահմանափակման առանձնահատկություններին, այլ Սահմանադրության 80-րդ հոդվածի իմաստով միավորվելու ազատության իրավունքի սահմանադրական դրույթների էության անխախտելիությանը՝ առանց սահմանադրական հիմքեր ունենալու բացարձակ արգելքի սահմանման միջոցով, Սահմանադրական դատարանը հարկ է համարում թվարկման ձևով անդրադառնալ միջազգային իրավական կարգավորումների միայն այն պարտադիր և խորհրդատվական դրույթներին ու նախադեպային դիրքորոշումներին, որոնք առնչվում են ոչ թե միավորվելու իրավունքի սահմանափակման հիմնախնդրին, այլ այդ իրավունքի բուն էության խաթարման իրավական հարցին:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այս «իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»: Այս հոդվածի վերջին իրավադրույթից ուղղակիորեն բխում է, որ **պետության միջամտությունն իրավունքին կարող է լինել իրավունքների իրականացման նկատմամբ, այսինքն՝ ճանաչելով իրավունքը՝ այն ենթարկել որոշակի սահմանափակումների, այլ ոչ թե իսպառ մերժել նշված սուբյեկտների այդ հնարավորությունը**¹⁹:

¹⁹ Այդ մոտեցման շրջանակներում Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները կրկնում են, որ սահմանափակումներ կարող են կիրառվել զինված ուժերի, ոստիկանության կամ պետության վարչակազմի անդամների կողմից միավորումների ազատության իրավունքի իրականացման համար: Բացի դրանից, դատարանը շեշտում է, որ այնուամենայնիվ, պետք է

Միավորումների ազատության վերաբերյալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) համատեղ ուղեցույցի 24-րդ կետում նույնպես նշվում է, որ միավորումների ազատության սահմանափակումները պետք է համապատասխանեն համաչափության թեստին, այսինքն՝ սահմանափակումների շրջանակը պետք է ներառի իրավունքի իրականացմանը նվազ միջամտող միջոցները: **Ավելին, սահմանափակումները երբեք չպետք է վերացնեն իրավունքը կամ զրկեն այն իր էությունից**²⁰:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ ԵԽԽՎ) «Ոստիկանության մասին հայտարարություն» թիվ 690 (1979) բանաձևի 6-րդ կետում նշվում է, որ ոստիկանության ծառայողները պետք է ունենան մասնագիտական կազմակերպությունների ստեղծման, դրանց անդամագրվելու և դրանցում ակտիվ դեր ունենալու ընտրություն, իսկ նույն հայտարարության հավելվածի «Կարգավիճակը» բաժնի 6-րդ կետի համաձայն՝ ոստիկանական մասնագիտական կազմակերպությանն անդամագրվելը և դրանում ակտիվ դերակատարում ունենալը չպետք է որևէ ոստիկանի համար բացասական հետևանքների հանգեցնեն²¹:

ԵԽԽՎ «Ձինված ուժերի մասնագիտական աշխատակազմի անդամների միավորումների իրավունքը» թիվ 903 (1988) բանաձևի 8-րդ կետով ԵԽԽՎ-ն կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին զինված ուժերի պրոֆեսիոնալ անդամներին օժտել նորմալ պայմաններում ժողովրդավարական ինստիտուտների շրջանակներում իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու նպատակով միավորումներ ստեղծելու, ինչպես նաև դրանց անդամագրվելու և դրանց գործունեությանն ակտիվ մասնակցություն դրսևորելու իրավունքով²²:

նաև նկատի ունենալ, որ 11-րդ հոդվածում նշված բացառությունները պետք է խստորեն մեկնաբանվեն. միայն համոզիչ և անհաղթահարելի պատճառները կարող են արդարացնել միավորվելու ազատության սահմանափակումները («Tüm Haber Sen and Çinar v. Turkey», FINAL 21.05.2006, app. no. 28602/95, §§ 35):

²⁰Հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)046-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)046-e) :

²¹Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.assembly.coe.int/nw/xml/xref/xref-xml2html-en.asp?fileid=16101&lang=en>:

²²Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://pace.coe.int/en/files/16314/html>:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Դատավորների մասին. Անկախություն, արդյունավետություն և պարտականություններ» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականի 25-րդ կետի համաձայն՝ դատավորները պետք է ազատ լինեն ստեղծելու մասնագիտական կազմակերպություններ, ինչպես նաև անդամագրվելու կազմակերպությունների, որոնց նպատակն է երաշխավորել նրանց անկախությունը, պաշտպանել նրանց շահերը և խթանել օրենքի գերակայությունը²³:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 3 կարծիքի 34-րդ կետի համաձայն՝ միավորումների ազատության իրավունքի իրականացման շրջանակներում դատավորները կարող են ստեղծել արհեստակցական միություններ և անդամագրվել դրանց²⁴:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում խնդրո առարկայի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումներից մի քանիսը Սահմանադրական դատարանը ներկայացրել է վերևում: Սակայն Եվրոպական դատարանը միավորումների ազատության, ինչպես նաև դրա բաղադրատարր հանդիսացող արհեստակցական միություններին անդամագրվելու իրավունքների վերաբերյալ սույն գործի պարզաբանման ենթակա հանգամանքների առումով արտահայտել է իրավական դիրքորոշումներ նաև այլ գործերով: Մասնավորապես՝

1) Եվրոպական դատարանը նշում է, որ թեև 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը արհմիությունների ազատությունը ներկայացնում է որպես միավորումների ազատության մեկ բաղադրատարր կամ հատուկ դրսևորում, հոդվածը չի երաշխավորում արհմիությունների կամ նրանց անդամների նկատմամբ որևէ հատուկ վերաբերմունք պետության կողմից («National Union of Belgian Police v. Belgium», 27.10.1975, app. no. 4464/70, § 38),

2) Կոնվենցիան երաշխավորում է արհմիության անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու ազատությունն արհմիության գործողությունների միջոցով, որի կառավարումն ու զարգացումը Պայմանավորվող պետությունները պետք է թույլ տան և հնարավոր դարձնեն («Swedish Engine Drivers' Union v. Sweden», 06.02.1976, app. no. 5614/72, § 40):

²³Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d>:

²⁴Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/16807475bb>:

3) Դատարանը կրկնում է, որ թեև 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը արհմիությունների ազատությունը ներկայացնում է որպես միավորումների ազատության մեկ բաղադրատարր կամ դրա հատուկ դրսևորում, այն ինքնին չի բացառում որևէ մասնագիտական խումբ հոդվածի գործողության շրջանակից: Առավելագույնը, որ կարող են ազգային իշխանությունները նախատեսել, «օրինական սահմանափակումներն» են իրենց որոշ աշխատողների նկատմամբ՝ 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն («Sindicatul «Păstorul cel Bun» v. Romania», 09.07.2013, app. no. 2330/09, § 145):

Միջազգային իրավական կարգավորումների ու նախադեպային դիրքորոշումների մոտեցումների ամփոփումը հնարավորություն է ընձեռում Սահմանադրական դատարանին փաստելու, որ միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միությունների ստեղծման և անդամագրման իրավունքի իրականացման վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումներն առաջին հերթին կարևորում են այդ իրավունքների՝ պետության կողմից ճանաչումը կամ «իրականացման իրավական հնարավորությունների ամրագրումը»՝ իհարկե, միևնույն ժամանակ չբացառելով կոնկրետ անձանց կոնկրետ խմբերի կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված այդ իրավունքների իրականացման որոշ սահմանափակումների նախատեսումը:

Սահմանադրական դատարանը վերն արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում պետական ծառայության սույն գործով խնդրո առարկա համարվող ոլորտներում ծառայողների համար արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության ձևի, բացարձակ արգելքի նախատեսումը համարում է Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ընդհանրապես միավորումների ազատությունը, ներառյալ նաև խնդրո առարկա իրավունքը միայն օրենքով սահմանափակելու հնարավորությունը՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Միավորումների ազատության սահմանափակման այս չափանիշները միջազգայնորեն հանրաճանաչ և Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները չգերազանցող իրավադրույթներ են,

սակայն արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սահմանափակումները սահմանելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք գործելու են կոլեկտիվ ու անհատական աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակ հետապնդող միության նկատմամբ, ինչը պահանջում է նկատի ունենալ, թե որքանո՞վ է իրավունքների կամ շահերի պաշտպանության ձևի օրենսդրական սահմանափակումը համահունչ սահմանափակման նպատակներին, կամ արդյո՞ք նպատակահարմար է սահմանափակել իրավունքների կամ շահերի պաշտպանության առաքելություն ունեցող հիմնական իրավունքը: Արհեստակցական միությունների վերը բերված սահմանադրական առաքելությունից, դրանց գործունեության դերից ու նշանակությունից ելնելով՝ այդ իրավունքի ամեն մի սահմանափակում կատարելիս պետք է ելնել, նախ, այն հանգամանքից, որ այն ի վերջո իրավունքների պաշտպանության ձև է, հետևաբար՝ սահմանափակումը պետք է գնահատել դրա նպատակների նեղ մեկնաբանման համատեքստում, որպեսզի թույլ չտրվի արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի էության խաթարում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սահմանադիրը միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման սահմանափակումների հիմք հանդիսացող նպատակներն ամրագրելով հանդերձ՝ սահմանափակումների մանրամասների նախատեսումը վերապահել է օրենսդիրին: Հիմնական իրավունքի բացարձակ արգելք չնախատեսելով հանդերձ, օրենսդիրն ունի հնարավորություն՝ ամրագրելու միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման այնպիսի սահմանափակումներ, որոնք, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, զինծառայողների, դատախազների, դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակով և գործունեության առանձնահատկություններով պայմանավորված, կարող են ապահովել վերջիններիս կողմից իրենց ծառայական (աշխատանքային) իրավունքների ու շահերի պաշտպանության իրականացման այնպիսի իրավական հնարավորությունները, որոնք խոչընդոտներ չեն հարուցի համապատասխան ոլորտներում խնդիրների, իրավասության արդյունավետ իրականացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանում է արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելք, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

4. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ոստիկանության ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

5. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության

45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

6. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ արհեստակցական միության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

7. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:

8. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

11 ապրիլի 2023 թվականի
ՍԴՈ- 1683